

**ԽՈՍՈՂԻ/ՅԵՂԻՆԱԿԻ ԲԱՑԱՍԱԿԱՆ-ՅԵԳՆԱԿԱՆ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԻ
ՆԵՐԱԿԱ ԱՐՏԱՋԱՅՏՈՒՄԸ ԱՐԴԻ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ ***

ՀՏԴ 81՝38:81՝27

DOI: 10.52063/25792652-2023.3.18-109

ՄԻՐԱՆՈՒՅ ԿԵՍՈՅԱՆ

*Երևանի պետական համալսարանի
հայ բանասիրության ֆակուլտետի հայոց լեզվի ամբիոնի ասպիրանտ,
ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն
kesoyan1996@mail.ru
ORCID: 0009-0001-9402-4913*

Խոսողը կամ հեղինակը կարող է ինչ-որ բանի մասին արտահայտվել չեզոք ոճով, բայց և կարող է արտահայտել իր վերաբերմունքը (դրական կամ բացասական) դրա նկատմամբ: Այն կարող է արտահայտվել և՛ արտակայորեն, այսինքն՝ ձևային արտահայտություն ունեցող բազմազան գնահատողական միջոցներով, և՛ ներակայորեն: Շատ ավելի բազմազան են բացասական վերաբերմունքի կամ գնահատականի դրսևորման միջոցները: Սույն հոդվածում մեր նպատակն է քննել խոսողի կամ հեղինակի բացասական վերաբերմունքի, գնահատականի ներակա արտահայտումը:

Մեր խնդիրն է ներկայացնել այն միջոցները, որոնցով ներակայորեն դրսևորվում է խոսողի կամ հեղինակի բացասական-հեգնական վերաբերմունքը:

Քննությունը կատարվել է վերլուծական և համադրական մեթոդների կիրառմամբ:

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ներակա-գնահատողական ասույթներում հեղինակի կամ խոսողի վերաբերմունքը կարող է արտահայտվել որոշակի բառային միջոցներով, օրինակ՝ հեգնական և փոխաբերական կիրառությամբ բառերով, կոպտասություններով, նորաբանություններով, հասարակաբանություններով և այլն, կամ առանց դրանց, երբեմն էլ՝ ամբողջ նախադասության միջոցով: Հատկանշական է, որ սույն հոդվածում առանձին լեզվական միջոցներ, մասնավորապես՝ վերոնշյալները, քննվում են նորովի՝ իբրև ներակա գնահատականի ցուցիչներ:

Ներակա գնահատականի արտահայտման մեջ ընդգծված դեր ունի հնչերանգը, որն ակնարկում է ձևականորեն արտահայտվածի և թաքնված իմաստի անհամապատասխանության մասին: Առանձին դեպքերում այն նպաստում է բառում կամ կառույցում նոր նշանակության առաջացմանը և դառնում խոսողի կամ հեղինակի վերաբերմունքի դրսևորման յուրօրինակ միջոց:

Հիմնաբառեր՝ գնահատողական ասույթներ, բացասական-հեգնական վերաբերմունք, ներակա գնահատական, հնչերանգ, կոպտասություններ, ժարգոնային բառեր, հասարակաբանություններ, նորաբանություններ, բառախաղ, հարցական նախադասություններ:

* Հոդվածը ներկայացվել է 09.09.2023թ., գրախոսվել՝ 22.09.2023թ., տպագրության ընդունվել՝ 31.10.2023թ.:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Խոսքը կարող է ունենալ տարբեր երանգավորումներ: Հեղինակը կամ խոսողը կարող է իր միտքն արտահայտել, տեղեկություն հաղորդել չեզոք ոճով, բայց և միաժամանակ կարող է այդ ասույթներում արտահայտել իր վերաբերմունքը, գնահատականը խոսակցի, ինչ-որ երևույթի կամ առհասարակ խոսքի առարկայի նկատմամբ: Դրանք, այսպես կոչված, գնահատողական ասույթներն են, որոնցում դրսևորվում է խոսողի կամ հաղորդման հեղինակի դրական կամ բացասական գնահատականը: Այս առումով առանցքային նշանակություն ունի այն, թե ինչ ենք հասկանում լավ կամ վատ ասելով, ինչն ենք համարում լավ, ինչը՝ վատ: Գնահատողական նշանակությունները սերտորեն կապված են տվյալ հանրույթի արժեքային համակարգի, աշխարհի մասին կարծրատիպային պատկերացումների հետ (Вольф 98; Змеёва, *Коммуникативная семантизация имплицитной оценки* 60; Приходько 51): Ընդ որում, պետք է նկատի ունենալ, որ տվյալ հանրույթի տարբեր սոցիալական խմբեր, ավելին՝ յուրաքանչյուր անհատ կարող է ունենալ իր արժեքային համակարգն ու կարծրատիպային պատկերացումները, որոնք տարբերվում են տվյալ հանրույթի արժեհամակարգից ու պատկերացումներից, ուստի նա իր անհատական ընկալմամբ է գնահատում տվյալ երևույթը, առարկան և այլն:

Կարծիք կա, որ վատի նշանակությունն ավելի տարբերակված է, քան լավինը, այսինքն՝ լեզվում վատ արարքների մանրամասն դասակարգման, նկարագրման միջոցները շատ ավելի բազմազան են, քան լավ արարքներինը: Ճանաչողական հոգեբանության տվյալներով՝ դա պայմանավորված է նրանով, որ մարդն առավել մանրամասն տարբերակում է այն, ինչը նրա մոտ առաջացնում է անհարմարության, վախի զգացում, կամ առհասարակ բացասական հույզերը, քան այնպիսիք, որոնք ունեն դրական գունավորում (Батыршин и Шустер 31): Նույնը կարելի է ասել նաև գնահատականի ներակա արտահայտման միջոցների առումով. շատ ավելի բազմազան են բացասական գնահատականի արտահայտման միջոցները: Սույն հոդվածում մենք կանդրադառնանք հենց բացասական գնահատականի ներակա արտահայտմանը:

ԽՈՍՈՂԻ/ՀԵՂԻՆԱԿԻ ԲԱՑԱՍԱԿԱՆ-ՀԵԳՆԱԿԱՆ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆԵՒ ՆԵՐԱԿԱ ԱՐՏԱՀԱՅՏՈՒՄԸ ԲԱՌԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐՈՎ

Գնահատականը համատեքստում կարող է արտահայտվել և՛ արտակայորեն, այսինքն՝ ձևային արտահայտություն ունեցող բազմազան գնահատողական միջոցներով, և՛ ներակայորեն: Ընդունված է ասել, որ ներակա գնահատականը խոսողի ուղղակիորեն չարտահայտված սուբյեկտիվ-գնահատողական հարաբերությունն է խոսքի առարկայի, հասցեատիրոջ կամ ինչ-որ բանի նկատմամբ (Никитин 156-157): Հուզական-գնահատողական տեղեկությունը ներակայորեն փոխանցող ասույթները կոչվում են ներակա-գնահատողական, որոնցում գնահատողական նշանակությունը կարող է արտահայտվել բառային միավորներով կամ առանց դրանց (Гергиев 137): Այսինքն՝ բառային միավորները հանդես են գալիս որպես յուրօրինակ ցուցիչներ՝ ներակայորեն արտահայտված վերաբերմունքի, գնահատականի ընկալման համար: Ռուս լեզվաբան Տ. Չմեյովան նշում է. «Այն փաստը, որ նշանակությունները, որոնք չունեն հատուկ ձևային արտահայտություն ասույթում, այս կամ այն չափով առկա են նրա իմաստային կառուցվածքում և ընկալվում են հաղորդման հասցեատերերի կողմից, պայմանավորում է ներակայման ցուցիչների (ազդանշանների, ցուցիչների և այլն) և նույնացուցիչների, այսինքն՝ նրա անուղղակի, միջնորդավորված նյութական մարմնավորման միջոցների փնտրողը» (Змеёва, *Оценочная модальность печатной рекламы предметов роскоши* 70): Նման ցուցիչներով ներակայորեն կարող է արտահայտվել տեղեկությունը կամ խոսողի, հեղինակի վերաբերմունքը կամ երկուսը միաժամանակ: Ելնելով սրանից՝ կարող ենք առանձնացնել գնահատողական բառային միավորներ պարունակող

ասույթների երկու խումբ՝ 1. ասույթներ, որոնցում բառային միավորներով միաժամանակ ներակայորեն արտահայտվում են և՛ տեղեկությունը, և՛ խոսողի կամ հեղինակի վերաբերմունքը, և 2. ասույթներ, որոնցում բառային միավորներով ներակայորեն արտահայտվում է զուտ խոսողի կամ հեղինակի վերաբերմունքը:

Ներիմաստի արտահայտման ոճական հնարքները քննելիս արդեն իսկ անդրադարձել ենք որոշակի միջոցների՝ **բառերի՝ հեգնական և փոխաբերական կիրառությամբ, դարձվածքների, համեմատությունների**, որոնցով կարող են միաժամանակ արտահայտվել և՛ հեղինակի կամ խոսողի վերաբերմունքը, գնահատականը, և՛ լրացուցիչ տեղեկություն, ուստի այստեղ այլևս դրանց չենք անդրադառնա (Կեսոյան 175-183):

Առաջին խմբի մեջ կարելի է նշել նաև, այսպես ասած, **կոպտասությունները**: Ի տարբերություն մեղմասությունների, որոնք չեզոք գունավորում ունեն, կոպտասություններն ունեն ընդգծված բացասական գունավորում: Դրանք միանգամից առանձնանում են համատեքստում՝ ներակայորեն արտահայտելով հեղինակի ընդգծված բացասական վերաբերմունքը տվյալ իրողության (տեղեկատվության) նկատմամբ, որը, իհարկե, տվյալ դեպքում անվանվում է այլ կերպ՝ անուղղակիորեն, օրինակ՝ «Չէ՞ որ կուսակցության **«կեղտոտ սպիտակեղեն»** ի ցույց է դրվել հանրությանը» («Հրապարակ», № 187 (3414), 3), որտեղ **«կեղտոտ սպիտակեղեն»** կոպտասությամբ նկատի են առնվում կուսակցության *«Ներքին անարդար արարքները»*՝ ընդգծելով դրանց նկատմամբ հեղինակի բացասական վերաբերմունքը:

Այստեղ կարող ենք նշել նաև այնպիսի բառային միավորների համատեղ գործածությունը միևնույն ասույթում, որոնցից մեկը, լինելով, այսպես ասած, վերամբարձ, միտում ունի չափազանցված ձևով բնութագրելու երևույթը, փաստը կամ իրողությունը, որն իրականում միանգամայն հակառակն է արտահայտում և հակասում է դրան, օրինակ՝ «Եվ այնպես էլ չէ, որ այդ **երկնահաս** տնտեսական **«բումից»** ՀՀ քաղաքացիներն առանձնապես շահել են. նրանց եկամուտներն անշեղորեն կրճատվում են, գները՝ անշեղորեն բարձրանում» («Հրապարակ», № 187 (3414), 1). **բում**-ը, որն ուղղակիորեն վերցված է այն գործածած անձի խոսքից, չակերտներում է առնված ոչ միայն դրա համար՝ որպես ուրիշի բառ, այլև տվյալ ասույթի հեղինակի հեգնանքն ընդգծելու համար, ներակայորեն հաղորդելու այն, որ գրանցված տնտեսական ցուցանիշն իրականում աճ չէ, այլ ճիշտ հակառակը, ինչը և հաստատվում է իբրև շարունակություն հեղինակի տված մեկնաբանությամբ, ուստի **«բում»**-ի հետ **երկնահաս** բառի կիրառությամբ ավելի է ընդգծվում հեղինակի հեգնական վերաբերմունքը:

Հեղինակի/խոսողի գնահատականը կարող է ներակայորեն դրսևորվել արտահայտությունների կիրառությամբ իրենց ոչ «հարիր» կառույցներում: Նման արտահայտություններն իրենց համապատասխան համատեքստերում սովորական, չեզոք գունավորում ունեն, սակայն դուրս գալով իրենց «ուղեծրից»՝ առանձին դեպքերում ձեռք են բերում նոր նշանակություն՝ միաժամանակ հանդես գալով որպես հեղինակի գնահատականի արտահայտման յուրօրինակ միջոցներ: Օրինակ՝ «Իշխանությունն իր դիրքերից, խորհրդարանական ընդդիմությունն էլ իր՝ **գեղեցիկ երգեցողությամբ** կյանքը կվերադարձնեն բնականոն հուն, որից այն դուրս էր եկել ԱԺ ընտրությունների թոհուրեհի ժամանակ» («Հրապարակ», № 67 (2118), 5): **Գեղեցիկ երգեցողություն** արտահայտությունը, եթե կիրառված լիներ, օրինակ, երաժշտության ոլորտին վերաբերող տեքստում կամ ինչ-որ անձի բնութագրում, բնական կլիներ, բայց այլ է պատկերը բերված օրինակում, որում այն ենթադրում է *«գեղեցիկ ձևակերպված ելույթներ, խոստումներ, որ ոչինչ են»* և նմանօրինակ իմաստներ՝ այդպիսով արտահայտելով հեղինակի հեգնանքը, արհամարհանքը: Կամ՝ «ՌԴ ԱԳՆ-ի հայտարարությունը ոչ այլ ինչ է, քան **խանդի տեսարան»** (<https://www.azatutyun.am/a/32241829.html>). պաշտոնական խոսք և «խանդի

տեսարան»... Այսինքն՝ նման դեպքերում էլ ավելի է ընդգծվում համատեքստի դերը, քանզի, ինչպես նշում է ռուս լեզվաբան Ս. Ի. Յակովլենկոն, «Յեզնական նշանակությունն իրադրային ներակայությո՛ւ է՝ եզրակացություն, որին ընդունողը հանգում է հաղորդակցության մեջ գործաբանական ասույթի գործաբանական մեկնության ընթացքում» (Яковенко 84):

Որպես խոսողի կամ հեղինակի վերաբերմունքի ներակա արտահայտման ուշագրավ միջոց առանձնացնենք **այսպես կոչված** կապակցությունը: Այն սովորաբար կիրառվում է պայմանականության իմաստով՝ ինչ-որ բանի պայմանական լինելն արտահայտելու համար, ինչպես՝ «**Ժարգոնային-ծածկալեզվյան բառերը** պատկանում են, այսպես կոչված, ցածր ոճին և մտնում են խոսակցական բառապաշարի մեջ» (Ավետիսյան և ուրիշներ 189): այստեղ **այսպես կոչված**-ը գործածվել է՝ նշելու, որ առանձնացված ոճը պայմանականորեն է կոչվել **ցածր**: Սակայն գնալով ավելի ու ավելի լայն տարածում է գտնում մեկ այլ միտում. **այսպես կոչված**-ը դիտավորյալ կիրառվում է ինչ-որ բանի՝ երևույթի, առարկայի, անձի, իրողության նկատմամբ հեզանք, արհամարհանք արտահայտելու, խոսքի առարկայի արժեզուրկ, իրեն վերագրվող հատկանիշներից իրականում զուրկ լինելն անուղղակիորեն նշելու համար, օրինակ՝ «Մեր երկրի, **այսպես կոչված**, ռազմավարական գործընկերն իրականում կանգնած է Ռուսաստանի՝ մեր խոշորագույն ռազմավարական մրցակիցներից մեկի կողքին» (<https://artsakhpress.am/arm/news/137802/>), այսինքն՝ խոսողը **այսպես կոչված գործընկեր** ասելով նկատի ունի, որ տվյալ երկիրն իրականում այնքան էլ իրենց գործընկերը չէ: Իզուր չէ ասվում, որ հեզանքը ներկայացնում է ճշմարտության պոստուկատի խախտում (Ермакова 17): Այսօր արդեն **այսպես կոչված** կապակցությունը, կարելի է ասել, դարձել է «ունիվերսալ» միջոց, որ կիրառվում է ցանկացած բանի հետ՝ այն հեզնելու համար, ինչպես՝ «**այսպես կոչված ղեկավար**» (այսինքն՝ ղեկավար անձ, որ զուտ ի պաշտոնն է ղեկավար, բայց իրականում զուրկ է ղեկավարին բնորոշ հատկանիշներից), «**այսպես կոչված դերասան**» (այսինքն՝ մասնագիտությամբ, կոչումով դերասան, որ չունի դերասանական վարպետություն) «**այսպես կոչված խաղաղություն**» (այսինքն՝ առերևույթ, թվացյալ խաղաղություն) և այլն: Այսինքն՝ կարելի է ասել, որ **այսպես կոչված** կապակցությունը կատարում է այն նույն դերը, ինչ չակերտները, երբ գործածվում են իբրև հեզանքի ցուցիչ: Այլ կերպ ասած՝ մի կողմից այն հանդես է գալիս որպես խոսողի բացասական գնահատականի ներակա արտահայտման միջոց, մյուս կողմից՝ բառը, որի հետ գործածվել է այդ կապակցությունը, տվյալ համատեքստում ձեռք է բերում նոր՝ տրամագծորեն հակառակ նշանակություն, որ նույնպես ընկալվում է ներակայորեն, ընդ որում, նման դեպքերում կարևոր դեր է կատարում հնչերանգը, քանզի

«Բառի կիրառությունը հնչերանգային պայմանավորվածությամբ կառույցում առանձին դեպքերում նպաստում է բառում նոր նշանակության առաջացմանը, որն իրացվում է միայն տվյալ «դարձվածաբանական սխեմայում»» (Шмелев 66): Ներակա գնահատականի արտահայտման մեջ հնչերանգն ընդգծված դեր ունի: Բերված օրինակներում և առհասարակ հեզանքի ցուցիչներն արտաբերվում են ուժեղացված հնչերանգով, և հենց դա է, որ «կարծես մատնանշում է ասույթի լեզվական բովանդակության և իմաստի անհամապատասխանությունը և վճռորոշ գործոնի դեր է կատարում նրա իմաստի համարժեք ընկալման համար» (Переяскина 5): Թե որքան մեծ է հնչերանգի դերը ներակա գնահատականի արտահայտման հարցում, ամենից պարզ ձևով կարելի է ցույց տալ հետևյալ օրինակով.

«– Ո՛ւր են տանում քեզ, Սաթենի՛կ:

– Հարցրու քո դավաճան ամուսնուն,– կոշտ, տղամարդկային ձայնով պատասխանեց Դավթին ուսին դրած Չարմանողը:– Ամուսինդ ծախեց մեզ. նա բաց արեց Հալիձորի դռներն ու հանձնեց թուրքին: **Աչքդ լո՛ւյս...**» (Խանգաղյան 699): Ընդգծված է մի բանաձև, որը, հատուկ հնչերանգով արտաբերվելով, դառնում է

Չարմանդի բացասական-հեզնական գնահատականի ներակայիչ, որով Չարմանդը դատապարտում է կատարվածը, հակառակ դեպքում կստացվեր բարեմաղթության խոսք, այսինքն՝ Չարմանդը ոչ թե դատապարտում, հեզնում է դավաճանի արարքը, այլ գովաբանում:

Խոսողի կամ հեղինակի վերաբերմունքը կարող է դրսևորվել **Նորաբանությունների, ժարգոնային բառերի ու հասարակաբանությունների** միջոցով: Նորաբանությունները սովորաբար ստեղծվում և կիրառվում են նոր երևույթներն ու իրողություններն անվանելու համար: Սակայն երբեմն որոշակի համատեքստում դրանք կարող են արտահայտել նաև գնահատողական նշանակություն, քանզի «Նորաբանությունները (հատկապես դիպվածային նորակազմությունները) գանազան վերաբերմունք արտահայտելու միջոց են, խոսքի առարկայի վերաբերյալ կարող են դրսևորել հեզնանք, արհամարհանք, ծաղր» (Ավետիսյան և ուրիշներ 163): Օրինակ՝ «Հայաստանում չորս տարի շարունակ քարոզվող **աննախադեպիզմի** երևույթը նոր դրսևորումներ է գրանցում» («Փաստ», № 111 (1123), 3): Խոսքը տևտեսական ոլորտում իշխանության ներկայացրած **աննախադեպ** աճի մասին է, որը, ասույթի հեղինակի գնահատմամբ, պայմանավորված է այլ հանգամանքներով և ոչ թե իշխանությունների գործունեությամբ, և հեղինակի բացասական գնահատականն այդ առնչությամբ փոխանցվում է **աննախադեպիզմ** նորակազմ դիպվածային բառի միջոցով: Դրա մասին է փաստում նաև տվյալ հոդվածի վերնագրում **աննախադեպ** բառի չակերտավոր կիրառությունը՝ իբրև հեզնանքի արտահայտություն: «Եղած տեմպերը պահելու համար ուղղակի հիմքեր չկան. **«աննախադեպ»** աճի ժամանակավոր էֆեկտը» («Փաստ», № 111 (1123), 3): Կամ «Գուցե եղել են ժամանակներ, ինչպես հիմա, երբ կառավարել են նաև **«Նազարաբախտ»**, ասել է թե ժողովրդին **«թուրկեճակիական»** խոստումներով կերակրող և մոլորեցնող բախտախնդիրներ, որոնց շուրթերից բստրած ամեն մի հերթական սուտը ժողովուրդն ընկալել է որպես միակ հնարավոր ճիշտ ելքը, ընտրությունը կամ հնարավորությունը» («Ազգ», № 39 (5727), 11). հեղինակը **«Նազարաբախտ»** որոշիչով է բնութագրել կառավարիչներին, այսինքն՝ բախտի, հանգամանքների բերմամբ կառավարիչ դարձածներին, որոնք զուրկ են կառավարման հմտություններից, իսկ նրանց խոստումները որակել **«թուրկեճակիական»**, այսինքն՝ առասպելական՝ այդպիսով արտահայտելով իր ծաղրը, հեզնական վերաբերմունքը նրանց նկատմամբ, որն ընկալվում է ներակայորեն: Ուշագրավ է, որ հեղինակի ներակա գնահատականը միևնույն ասույթում արտահայտվում է և՛ բացասական, և՛ դրական հարանշանակությամբ բառերի կիրառությամբ. «Նազարի բախտ» ասվածն արդեն իսկ ունի բացասական երանգավորում, իսկ «Թուր Կեճակի»-ն՝ դրական՝ որպես Սասնա ծռերի առասպելական զենքը, և այն, որ դրանից սերած բառն այստեղ գործածվում է բացասական իմաստով, բխեցվում է դրա չակերտավոր, այսինքն՝ հեզնական կիրառությունից և համատեքստից:

Ժարգոնային բառերը մտնում են խոսակցական բառապաշարի մեջ, բնորոշ են առանձին սոցիալական խավերի ու խմբերի, որոնք «գաղտնիության կամ մի այլ նկատառումով «ստեղծել» ու գործածում են դրանք» (Մարգարյան 203): Այդպիսի «նկատառում» կարող է լինել սեփական վերաբերմունքի արտահայտումը ինչ-որ բանի նկատմամբ: Ժարգոնային բառերը պատկանում են ցածր ոճին և, կարելի է ասել, ինքնին ներակայում են բացասական երանգավորում անուղղակիորեն արտահայտելով խոսողի արհամարհանքը, հեզնանքը խոսքի առարկայի նկատմամբ, առանձին դեպքերում նաև նոր իմաստ, օրինակ՝ «...անցավ մեկ այլ **«տոռմուզ»** ծրագրի՝ ինչ-որ «Արաքս» ընկերությունը պետք է մասնավորեցնել» («Հրապարակ», № 67 (2118), 2), որտեղ հեղինակը ծրագրի անպետք, անիմաստ, ոչ արտադրողական լինելն ընդգծելու համար այն բնութագրում է **«տոռմուզ»** ժարգոնային բառով, կամ «Պարզապես, վերին օղակներից ինչ-ինչ զգուշացումներից հետո խմբագրվել է

ներկայացման բովանդակությունը՝ արդյունքում ստանալով «ճ» կլասի հումոր», որտեղ «ճ» կլաս-ով նշվում է հումորի, այդպիսով նաև ներկայացման շատ ցածր մակարդակը («Իրավունք», № 102 (3576), 2) և այլն:

Հասարակաբանությունները ևս ցածր ոճին են պատկանում և գործածվում են խոսքի հուզարտահայտչական երանգավորման համար: Դրանք ևս ունեն բացասական երանգավորում՝ այդպիսով կոնկրետ համատեքստում դառնալով հեղինակի վերաբերմունքի ցուցիչ-ներակայիչ, օրինակ՝ «Մենք արդեն գրել ենք, որ այս ամենը մեկ նպատակ է հետապնդում՝ տոնավաճառի աշխատակիցներին «քշել» վարչապետի և Սամվել Կարապետյանի համատեղ նոր կառուցվող տոնավաճառի տարածք, որը գործելու է «Սուրմալու» առևտրի կենտրոնի հարևանությամբ» («Ժամանակ», № 75 (3364), 1): Խոսքը հարկային մարմին՝ տոնավաճառում իրականացրած ստուգումների ու տուգանքների մասին է, որոնք, ըստ հեղինակի, հատուկ նպատակ ունեն: Ուստի հեղինակը, գրական տարբերակի փոխարեն գործածելով «քշել» հասարակաբանությունը, միաժամանակ արտահայտում է իր բացասական վերաբերմունքն այդ առնչությամբ: Կամ «Նավասած» պաշտոնը («Հրապարակ», № 185 (3412), 1. վերնագիր), որտեղ հեղինակը հեզնանքով պաշտոնը «Նավասած» է որակում, քանի որ այն ոչ մի կերպ չէր զբաղեցվում՝ չնայած գործադրված «ջանքերին»: Երբեմն նման գործառույթ են կատարում նաև ժողովրդախոսակցական լեզվի բառերը, օրինակ՝ «Դժվար է միարժեքորեն պնդել, բայց եղել է այն, որ, օրինակ՝ Ռուսաստանի և Թուրքիայի հարաբերություններում «**շաքար-լոխում**»-ին կրկին փոխարինելու է գալիս «**կծու-թթու**»-ն» («Փաստ», № 77 (1223), 2): Այստեղ հեղինակը «շաքար-լոխում» ասելով նկատի ունի Ռուսաստանի և Թուրքիայի *ջերմ, բարիդրացիական* հարաբերությունները, որ գնալով դառնում են *կոշտ, լարված*, հեղինակի խոսքով՝ «կծու-թթու»: Այսինքն՝ տվյալ դեպքում ընդգծված ձևերը երկու գործառույթ են կատարում. մի կողմից՝ ներակայորեն փոխանցում են հեղինակի հեզնական վերաբերմունքը տվյալ իրողության նկատմամբ, մյուս կողմից՝ «կողավորում են» ասելիքը:

Խոսողի կամ հեղինակի գնահատականի ներակա արտահայտման հետաքրքրական միջոց կարող է լինել **բառախաղը**: Բառախաղը խոսքին հաղորդում է արտահայտչականություն, ինքնատիպություն, սրամտություն, բայց և կարող է դառնալ վերաբերմունքի ներակայիչ, ինչպես՝ «ԿԸՀ անդամների **սիմետրիկ** դասավորությունից անդին «**ասիմետրիկ**» իրողություններ են» («Ազգ», № 39 (5727), 7): Վերնագրում բառախաղով վարագործված հեզնանքը հասկանալի է դառնում, երբ ընթերցողը վերլուծում և հասկանում է, թե ինչ նկատի ունի հեղինակը «սիմետրիկ» և «ասիմետրիկ» ասելով, և ինչերն են բնութագրվում այդ որոշիչներով: Այսպես՝ հեղինակը գրում է. «Համաձայնե՞ք՝ զուտ միայն էսթետիկ առումով ԿԸՀ անդամները բավական գեղեցիկ են նայվում. կանգնել են ըստ աստիճանակարգի, պահպանել համաչափությունն ու անգամ գենդերային հավասարությունը», այնուհետև՝ «...Վահագն Հովակիմյանը՝ իշխող «Զաղաքացիական պայմանագիր» խմբակցությունից, Աժ-ում կազմակերպված քվեարկության ժամանակ ընտրել էր ԿԸՀ անդամի թեկնածու Վահագն Հովակիմյանին, այսինքն՝ ինքն իրեն: ...պետական մի կառույցից մեկ այլ գերատեսչություն գնացող անձն ինքն իրեն չի կարող ընտրել»: Առաջինը ներկայացնում է «սիմետրիկ դասավորությունը», երկրորդը՝ «ասիմետրիկ իրողությունները», և հեղինակի վերաբերմունքը դրսևորվում է նաև նրանով, որ ուղիղ գիծ է տարված միանգամայն տարբեր հարթություններում գտնվող երևույթների միջև, քանզի ի՞նչ կապ ունի անդամների կանգնելու ձևը նրանց գործունեության հետ:

Գնահատողական նշանակությունը կարող է դրսևորվել այնպիսի բառերով, որոնց կիրառությունը տվյալ համատեքստում գրական նորմի տեսանկյունից ճիշտ չէ, այսինքն՝ իրար հետ գործածվում են իմաստով անհամատեղելի բառեր: Այսպես՝ ոչ անձին առնչվող բառը կարող է կիրառված լինել անձի հետ, օրինակ.

«– Ո՞ր մելիքի զավակն ես,– նորից հարցրեց Գոհարը:

– Մելիք Թուրինջի,– կարծես ամաչելով՝ պատասխանեց Թովման:– Իմ անունը Թովմա է, ես հարյուրապետ եմ:

– Արդե՛ն,– դեմքը խոժոռեց աղջիկը,– այդ ե՛րբ հասցրեց մելիք Թուրինջը հարյուրապետ զավակ **աճեցնել...**» (Խանգաղյան 81): Գրական նորմի տեսանկյունից **աճեցնել**-ի կիրառումը **զավակ**-ի հետ ճիշտ չէ. աճեցնում են բույսերը, ոչ թե մարդուն: Սակայն տվյալ համատեքստում դա դառնում է ոճական հնարք, որի միջոցով Գոհարն արտահայտում է ծաղր, արհամարհանք Թովմայի՝ հարյուրապետ դառնալու իրողության անչլությանը:

Նույնը կարելի է ասել հատկապես **դա** առարկայանիշ դերանվան մասին: **Դա**-ն կիրառվում է, երբ խոսքն իրերի մասին է: Առօրյա խոսքում, սակայն, շատ հաճախ խոսողն ինչ-որ անձի մասին խոսելիս միտումնավոր **նա** անձնական դերանվան փոխարեն գործածում է **դա**-ն՝ նպատակ ունենալով արտահայտելու իր արհամարհանքը տվյալ անձի նկատմամբ, ինչպես՝ «**Դրա** անունը չտաս», «Ոչինչ չեմ ուզում լսել **դրա** մասին» և այլն: Այսինքն՝ նման դեպքերում **դա** դերանունը դառնում է խոսողի բացասական վերաբերմունքի յուրօրինակ ներակայիչ:

Որպես ինչ-որ անձի նկատմամբ խոսողի կամ հեղինակի ներակա բացասական-հեզնական վերաբերմունքի ցուցիչ կարող է հանդես գալ նաև **ոմն** անորոշ դերանունը, երբ կիրառվում է անձի անվան կամ անձ նշանակող բառի հետ, օրինակ՝ «Նիկոլի մոտ նախագահի պարտականություններ կատարող **ոմն** *Վահագն Խաչատրյանն* արտաքին հարթակներում սկսել է քարոզարշավը...» (<https://iravunk.com/?p=256660&l=am>), «Իսկ **ոմն** նախկին *խմբագիր* շպարգալկաներ է տիրաժավորում իր ուսապարկերի համար...» (<http://www.hhk.am/hy/news/item/2021/02/16/ma8gw0908765468i9/>): **Ոմն** անորոշ դերանվան նման կիրառությամբ խոսողը կարծես «իրեն վեր է դասում տվյալ անձից»: Ինչպես նշում է ռուս լեզվաբան Օ. Պ. Երմակովան, հեզնանքի տիպական հատկանիշներից է հիերարխիան, այն ենթադրում է գործընկերների սոցիալական հավասարություն կամ անհավասարության դեպքում կարող է տարածվել վերևից ներքև, բայց ոչ հակառակը (Ермакова 14):

ԽՈՍՈՂԻ/ՀԵՂԻՆԱԿԻ ԲԱԾԱՍԱԿԱՆ-ՀԵԳՆԱԿԱՆ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆԵՑԻ ՆԵՐԱԿԱ ԱՐՏԱՋԱՅՏՈՒՄԸ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՈՎ

Խոսողի կամ հեղինակի բացասական-հեզնական վերաբերմունքը ներակայորեն կարող է դրսևորվել ոչ միայն տարբեր բառային միջոցներով, այլև ամբողջ նախադասության միջոցով: Այս առումով բնութագրական են հարցական նախադասությունները, որոնք, ինչպես հայտնի է, բացի սովորական հարցումից, կարող են արտահայտել նաև հաստատական կամ ժխտական նշանակություն, իհարկե ներակայորեն¹: Ուշագրավն այն է, որ ժխտում արտահայտող հարցական նախադասությունները երբեմն կարող են նաև ներակայորեն փոխանցել խոսողի/հեղինակի բացասական-հեզնական վերաբերմունքը: Նման դեպքերում, բացի հնչերանգից, կարևոր դեր է կատարում նաև բառերի դասավորությունը (Шмелев 65, հմմտ. Бондаренко 107): Օրինակ՝ «Ավինյանը կարող է նրանց ընդհուպ հավաքել իր շուրջն ու, ինչպես Նիկոլը, խորհրդակցություններ անցկացնել, թե՛ տեսեք-տեսեք, ընդդիմությունն էլ է մասնակցում քաղաքի կառավարման հարցերին: **Բայց ո՛ւր է այնտեղ ընդդիմությունն**» («Հրապարակ», № 138 (3593), 5). ընդգծված հարցական նախադասությամբ մի կողմից արտահայտվում է ժխտում, այսինքն՝ հեղինակը ներակայորեն հաղորդում է, որ «ընդդիմություն, որպես այդպիսին, չկա»՝ նկատի ունենալով նրա՝ թերևս անգործությունը, ինչ-որ բան փոխելու անգործությունը և այլն, իսկ մյուս կողմից հատուկ հնչերանգով փոխանցվում է հեղինակի հեզնանքը ընդդիմության նկատմամբ:

¹ Նման խոսքային անուղղակի ակտերի մասին մանրամասն տե՛ս Դոխոյան 89-104:

Երբեմն հեղինակի կամ խոսողի բացասական վերաբերմունքը պարփակում են դարձվածային արժեք ունեցող կառույցները: Դրանց համար հաճախ բնութագրական է այն, որ դրանք իրենց կիրառական շրջանակով, ոճով կարծես «չեն մերվում» ընդհանուր ասույթին, այսպես ասած, «օտար» տարր են ասույթում, բայց և այդպիսով հասկացնելով, որ իրենց կիրառությունն ինքնանպատակ չէ, այլ անուղղակիորեն հաղորդում են ինչ-որ բան, տվյալ դեպքում՝ հեղինակի կամ խոսողի վերաբերմունքը: Օրինակ՝ «**Չեծանիվ չենք հայտնագործի**, եթե նշենք, որ իշխանությունը փորձելու է ամեն գնով հաղթել Երևանի ավագանու ընտրություններում ու դրա համար չի խնայում և չի խնայելու ոչինչ, անգամ մեր՝ հարկատուներիս գումարները» («Փաստ», № 85 (1231), 1). Ընդգծված «**Չեծանիվ չենք հայտնագործի**» կառույցը նախ և առաջ ներակայում է «Նորություն»՝ նոր բան չենք ասի» իմաստը և այն «օտար» տարրն է, որի կիրառությամբ հեղինակն արտահայտում է իր բացասական գնահատականը տվյալ ասույթում արտահայտվածի վերաբերյալ, որը չէր դրսևորվի, եթե հեղինակը, ենթադրենք, կիրառեր «Նորություն չենք ասի» սովորական, չեզոք արտահայտությունը, որն իր ոճով համահունչ կլիներ ընդհանուր ասույթին:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով՝ առանձնակի հետաքրքրություն և կարևորություն ունի խոսողի կամ հեղինակի բացասական-հեգնական վերաբերմունքի ներակա արտահայտման քննությունը, քանի որ այդ դեպքում առաջ է գալիս ուղղակիորեն ասվածի և իրականում ենթադրած իմաստի անհամապատասխանություն: Հաղորդակցության մասնակիցներից կամ ընթերցողներից պահանջվում են որոշակի ջանքեր այդ թաքնված իմաստն ընկալելու համար, որն առանցքային է տվյալ ասույթում:

Խոսողի կամ հեղինակի բացասական-հեգնական վերաբերմունքի ներակա արտահայտման միջոցները բազմազան են ու բազմաբնույթ: Որպես այդպիսիք՝ կարող են հանդես գալ տարբեր բառային միավորներ կամ ամբողջական նախադասություններ: Ընդ որում, նման միջոցներով ներակայորեն արտահայտելով իր վերաբերմունքը՝ խոսողը/հեղինակն էլ ավելի է զորեղացնում տպավորությունը, ազդեցությունը, քան եթե դիմեր սովորական գնահատողական միջոցների՝ արտահայտելով իր վերաբերմունքն ուղղակիորեն՝ արտակայորեն: Առանձին դեպքերում նա միաժամանակ ներակայորեն փոխանցում է նաև որոշակի տեղեկատվություն:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. «Ազգ», Երևան, 28 հոկտեմբեր, 2022, № 39 (5727):
2. «Ժամանակ», Երևան, 25 ապրիլի 2017, № 75 (3364):
3. «Իրավունք», Երևան, 5 հոկտեմբեր, 2022, № 102 (3576):
4. «Հրապարակ», Երևան, 14 ապրիլ, 2017, № 67 (2118); 1 նոյեմբեր, 2022, № 185 (3412); 3 նոյեմբեր, 2022, № 187 (3414); 22 օգոստոս, 2023, № 138 (3593):
5. «Փաստ», Երևան, նոյեմբերի 3, 2022, № 111 (1123); հուլիսի 15, 2023, № 77 (1223); օգոստոսի 22, 2023, № 85 (1231):
6. Ավետիսյան Յուրի և ուրիշներ. *Հայոց լեզու և խոսքի մշակույթ*. ԵՊՀ հրատ., Երևան, 2016, 512 էջ:
7. Դոխոյան Ռուզաննա. «Խոսքային անուղղակի ակտերը արդի հայերենի խոսքային գործունեության իմաստային ենթադաշտում». *Բանբեր Վ. Բոյունսիի անվան պետական համալսարանի*, № 1 (60), 2022, էջ 89-104, doi: 10.51307/18293107/laph/22.60-89:
8. Խանզադյան Սերո. *Միլիթար Սպարապետ*. Երևան, Սովետ. գրող, 1988, 760 էջ:

9. Կեսոյան Միրանուշ. «Պատկերավորման-արտահայտչական միջոցները որպես ներմաստի արտահայտման ոճական հնարանքներ: Քննությունը նոր լույսի ներքո». *ՎԷՄ*, № 4 (80), հոկտեմբեր-դեկտեմբեր 2022, էջ 173-190, doi: 10.57192/18291864-2022.4-173:
10. Մարգարյան Ալեքսանդր. *ժամանակակից հայոց լեզու: Բանագիտություն*. Երևանի համալսարանի հրատ., Երևան, 1993, 232 էջ:
11. Батыршин, Ильдар и В. Шустер. «Структура семантического пространства словесных оценок поступков». Принципиальные вопросы теории знаний .– Тр. по искусственному интеллекту, Гарту, 1984, стр. 20-38.
12. Бондаренко, Виктор. *Отрицание как логико-грамматическая категория*. Наука, Москва, 1983, 210 С.
13. Вольф, Елена. «Оценочное значение и соотношение признаков «хорошо/плохо»». *Вопросы языкознания*, № 5, Наука, Москва, 1986, стр. 98-113.
14. Гергиев, Олег. «Имплицитно-оценочный высказывания в публичной речи». *Вестник ВолГУ, Серия А: Языкознание*, Волгоград, 2017, стр. 136-140.
15. Ермакова, Ольга. *Ирония и ее роль в жизни языка: учебное пособие. 2-е изд., стереотип*. Флинта, Москва, 2011, 107 С.
16. Змеёва, Татьяна. «Коммуникативная семантизация имплицитной оценки (на материале французского языка)». *Филологические науки. Вопросы теории и практики*, № 2 (6), Грамота, Тамбов, 2010, стр. 57-62.
17. ---. «Оценочная модальность печатной рекламы предметов роскоши (на материале французского языка)». *Филологические науки. Вопросы теории и практики*, № 1 (12), Грамота, Тамбов, 2012, стр. 68-73.
18. Никитин, Михаил. *Основы лингвистической теории значения*. Высшая школа, Москва, 1988, 168 С.
19. Переяшкина, Любовь. «Специфика экспликации скрытых смыслов в речевом акте», https://pgu.ru/upload/iblock/5bf/uch_2009_ii_00031.pdf. Доступно: 05.06.2022.
20. Приходько, Анна. «Имплицитность как способ скрытого оценивания», <https://cyberleninka.ru/article/n/implitsitnost-kak-sposob-skrytogo-otsenivaniya/viewer>. Доступно: 20.05.2023.
21. Шмелев, Дмитрий. «Экспрессивно-ироническое выражение отрицания и отрицательной оценки в современном русском языке». *Вопросы языкознания*, № 6, Изд. академии наук СССР, Москва, 1958, стр. 63-75.
22. Яковенко, Татьяна. «Ирония как имплицитное содержание онимических единиц». *Известия Южного федерального университета. Филологические науки*, № 3, 2011, стр. 84-91.
23. <http://www.hhk.am/hy/news/item/2021/02/16/ma8gw0908765468i9/>. Accessed: 20.02.2021.
24. <https://www.azatutyun.am/a/32241829.html>. Accessed: 03.02.2023.
25. <https://iravunk.com/?p=256660&l=am>. Accessed: 28.05.2023.

WORKS CITED

1. “Azg”, Erevan, 28 hoktember, 2022, № 39 (5727). (In Armenian)
2. “Zhamanak”, Erevan, 25 aprili 2017, № 75 (3364). (In Armenian)
3. “Iravunq”, Erevan, 5 hoktember, 2022, № 102 (3576) (In Armenian)
4. “Hraparak”, Erevan, 14 april, 2017, № 67 (2118); 1 noyember, 2022, № 185 (3412); 3 noyember, 2022, № 187 (3414); 22 o'gostos, 2023, № 138 (3593). (In Armenian)
5. “P'ast”, Erevan, noyemberi 3, 2022, № 111 (1123); hulis 15, 2023, № 77 (1223); o'gostosi 22, 2023, № 85 (1231). (In Armenian)

6. Avetisyan Yuri ev urishner. *Hayoc lezu ev xosqi mshakuyt'*. EPH hrat., Erevan, [Armenian Language and Rhetorics. YSU Publishing House, Yerevan] 2016, 512 e'j. (In Armenian)
7. Doxoyan R'uzanna. "Xosqayin anughghaki aktery' ardi hayereni xosqayin gorc'uneut'yan imastayin ent'adashtum". *Banber V. Bryusovi anvan petakan hamalsarani*, № 1 (60), 2022, ["Speech Indirect Acts in the Semantic Subfield in Speech Activity of Modern Armenian". *Bulletin of Brusov State University*, № 1 (60), 2022] e'j 89-104, doi: 10.51307/18293107/laph/22.60-89. (In Armenian)
8. Xanzadyan Sero. *Mxit'ar Sparapet*. Erevan, Sovet. grogh, [Mkhitar Captain. Yerevan, Soviet writer] 1988, 760 e'j. (In Armenian)
9. Kesoyan Miranush. "Patkeravorman-artahaytchakan mijocnery' vorpes nerimasti artahaytman voch'akan hnaranoqner: Qnnut'yun nor luysi nerqo". *Ve'm*, № 4 (80), hoktember-dektember 2022, ["Figurative and Expressive Means as Stylistic Tricks of Expression of Implied Meaning: Analysis under a new light". *Vem*, № 4 (80), October-December 2022] e'j 173-190, doi: 10.57192/18291864-2022.4-173. (In Armenian)
10. Margaryan Aleqsandr. *Zhamanakakic hayoc lezu: Bar'agitut'yun*. Erevani hamalsarani hrat., Erevan, [Modern Armenian: Lexicology. Yerevan Publishing House, Yerevan] 1993, 232 e'j. (In Armenian)
11. Batyrshin Il'dar i V. Shuster. "Struktura semanticheskogo prostranstva slovesnyh ocenok postupkov". *Principial'nye voprosy teorii znaniy.* – Tr. po iskusstvennomu intellektu, Tartu, ["The Structure of the Semantic Space of Verbal Assessments of Actions". *Fundamental questions of the theory of knowledge.* – Tr. on artificial intelligence, Tartu] 1984, str. 20-38. (In Russian)
12. Bondarenko Viktor. *Otricanie kak logiko-grammaticheskaja kategorija*. Nauka, Moskva, [Negation as a Logical-Grammatical Category. Nauka, Moscow] 1983, 210 str. (In Russian)
13. Volf Elena. "Ocenochnoe znachenie i sootnoshenie priznakov "horosho/ploho"". *Voprosy jazykoznanija*, № 5, Nauka, Moskva, ["Estimated Value and Ratio of "Good/Bad" Signs". *Questions of Linguistics*, № 5, Nauka, Moscow] 1986, str. 98-113. (In Russian)
14. Gergiev Oleg. "Implicitno-ocenochnyj vyskazivaniya v publichnoj rechi". *Vestnik Volgu, Serija A: Jazykoznanie*, Volgograd, ["Utterances with Implicit Evaluation in Public Speeches". *Vestnik Volgu, Series A: Linguistics*, Volgograd] 2017, str. 136-140. (In Russian)
15. Ermakova Ol'ga. *Ironija i ee rol' v zhizni jazyka: uchebnoe posobie. 2-e izd., stereotip*. Flinta, Moskva, [Irony and Its Role in the Life of Language: A Textbook. 2nd ed., Stereotype. Flinta, Moscow] 2011, 107 str. (In Russian)
16. Zmejova Tat'jana. "Kommunikativnaja semantizacija implicitnoj ocenki (na materiale francuzskogo jazyka)". *Filologicheskie nauki. Voprosy teorii i praktiki*, № 2 (6), Gramota, Tambov, ["Communicative Semantization of Implicit Estimation (on the Material of the French Language)". *Philological sciences. Questions of theory and practice*, № 2 (6), Gramota, Tambov] 2010, str. 57-62. (In Russian)
17. ---. "Ocenochnaja modal'nost' pechatnoj reklamy predmetov roskoshi (na materiale francuzskogo jazyka)". *Filologicheskie nauki. Voprosy teorii i praktiki*, № 1 (12), Gramota, Tambov, ["Luxury Goods Print Advertising Estimating Modality (by the French Language Material)". *Philological sciences. Questions of theory and practice*, № 1 (12), Gramota, Tambov] 2012, str. 68-73. (In Russian)
18. Nikitin Mihail. *Osnovy lingvisticheskoy teorii znachenija*. Vysshaja shkola, Moskva, [Fundamentals of Linguistic Theory of Meaning. Vysshaja shkola, Moscow] 1988, 168 str. (In Russian)
19. Perejashkina Ljubov'. "Specifika jeksplikacii skrytyh smyslov v rechevom akte", ["Specifics of Explication of Hidden Meanings in a Speech Act"]

https://pgu.ru/upload/iblock/5bf/uch_2009_ii_00031.pdf. Dostupno: 05.06.2022. (In Russian)

20. Prihod'ko Anna. "Implicitnost' kak sposob skrytogo ocenivaniya", ["Implicitness as a Means of Latent Evaluation"] <https://cyberleninka.ru/article/n/implitsitnost-kak-sposob-skrytogo-otsenivaniya/viewer>. Dostupno: 20.05.2023. (In Russian)

21. Shmelev Dmitrij. "Ekspressivno-ironicheskoe vyrazhenie otricanija i otricatel'noj ocenki v sovremennom russskom jazyke". *Voprosy jazykoznaniya*, № 6, Izd. akademii nauk SSSR, Moskva, ["Expressive and Ironic Expression of Negation and Negative Evaluation in Modern Russian". *Questions of Linguistics*, № 6, Academy of Sciences of the USSR, Moscow] 1958, str. 63-75. (In Russian)

22. Jakovenko Tat'jana. "Ironija kak implicitnoe sodержanie onimicheskikh edinic". *Izvestija Juzhnogo federal'nogo universiteta. Filologicheskie nauki*, № 3, ["Irony as an Implicit Content of Onymic Units". *News of the Southern Federal University. Philological Sciences*, № 3] 2011, str. 84-91. (In Russian)

THE IMPLIED EXPRESSION OF THE SPEAKER/AUTHOR'S NEGATIVE-IRONIC ATTITUDE IN MODERN ARMENIAN

MIRANUSH KESOYAN

*Yerevan State University, Faculty of Armenian Philology,
Chair of the Armenian Language, Ph.D. Student,
Yerevan, the Republic of Armenia*

The speaker or the author can speak about something in a neutral way but he/she can also express his/her attitude (positive or negative) towards that. It can be expressed both explicitly, that is, with a variety of evaluative means having formal expression, and implicitly. The means of expressing a negative attitude or assessment are much more diverse. In this article, our goal is to examine the implied expression of the speaker's or the author's negative attitude and assessment.

Our task is to present the means by which the speaker's or the author's negative-ironic attitude is manifested implicitly.

Analytical and comparative methods have been used in this study.

The study shows that the author's or the speaker's attitude in the implicit-evaluative utterances can be expressed by certain verbal means, for example, ironic and metaphorical words, vulgarity, neologisms, vernacular language, etc., or without them, and sometimes through the whole sentence. It is noteworthy that in this article, individual language indicators, particularly those listed above, are reconsidered as indicators of implicit assessment.

The tone plays a significant role in the expression of the implicit assessment, which hints at the inconsistency of what is formally expressed and the hidden meaning. In some cases, it contributes to the emergence of a new meaning in a word or structure and becomes a unique way of expressing the speaker's or author's attitude.

Keywords: *evaluative utterances, negative-ironic attitude, implicit assessment, tone, dysphemisms, slang words, vernacular language, neologism, pun, interrogative sentences.*

ИМПЛИЦИТНОЕ ВЫРАЖЕНИЕ НЕГАТИВНО-ИРОНИЧЕСКОГО ОТНОШЕНИЯ ГОВОРЯЩЕГО/АВТОРА В СОВРЕМЕННОМ АРМЯНСКОМ ЯЗЫКЕ

МИРАНУШ КЕСОЯН

*аспирант кафедры армянского языка
факультета армянской филологии
Ереванского государственного университета,
г. Ереван, Республика Армения*

Говорящий или автор может выразить свою мысль нейтрально, но также может выразить и свое отношение к сказанному (положительное или отрицательное). Оно может быть выражено как эксплицитно, т.е. с помощью разнообразных оценочных средств, имеющих формальное выражение, так и имплицитно. Гораздо разнообразнее представлены средства выражения негативного отношения или оценки. В данной статье мы поставили своей целью рассмотреть имплицитные способы выражения негативного отношения и оценки говорящего или автора.

Задачей данной статьи является презентация средств, с помощью которых имплицитно выражается негативно-ироническое отношение говорящего или автора.

Исследование проводилось с использованием аналитических и сравнительных методов.

Исследование показало, что позиция говорящего или автора в имплицитных оценочных высказываниях может быть выражена определенными речевыми средствами, например, ироническими и метафорическими словами, обценной лексикой, неологизмами, просторечиями и т.д., или без них, а иногда и посредством всего предложения. Отметим, что в данной статье отдельные языковые показатели, в частности вышеперечисленное, рассматриваются с новой точки зрения как имплицитные показатели оценки.

Большую роль в выражении имплицитной оценки играет интонация, которая намекает на несоответствие формально выраженного и скрытого смысла. В отдельных случаях она способствует формированию нового значения в слове или конструкции и становится своеобразным способом выражения мировоззрения говорящего или автора.

Ключевые слова: *оценочные высказывания, негативно-ироническое отношение, имплицитная оценка, интонация, дисфемизмы, жаргонизмы, просторечия, неологизмы, игра слов, вопросительные предложения.*